08.03.2018թ.

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔ-ՈՒՂԵՐՁԸ ԿԱՆԱՆՑ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ՝ ՄԱՐՏԻ 8-Ի ԱՌԹԻՎ

Գրկին գարուն է Հայոց աշխարհում: Բնության զարթոնքն ազդարարում է նոր կյանքի սկիզբը: Գարունը լույս է, արև, ջերմություն, տրամադրություն, ապագայի շունչ: Գարնանային տրամադրությունը մեկտեղվել է բոլորիս համար սիրելի ու սպասված տոնի՝ Մարտի 8-ի հետ: Տոնական այս օրը լավագույն առիթ է բարձրաձայնելու մեր զգացմունքների մասին, ևս մեկ անգամ կարևորելու և արժևորելու կանանց տեղն ու դերը մեր հասարակության մեջ:

Սիրելի կանայք, մայրեր, քույրեր և աղջիկներ

Անուրանալի է ձեր ներդրումը մեր հաղթանակների, մեր պետության կայացման գործում: Դուք լավագույն գաղափարների կրողն եք, մեր ձեռքբերումների հեղինակները:

Մեր կողքին ապրում և արարում են մասնագիտական և աշխատանքային մեծ փորձառություն ունեցող կանայք, օրինակելի մայրեր, ազատամարտիկների կանայք, որոնցով պետք է հպարտանալ, որոնց աշխատանքը և ջանքերը պետք է գնահատել:

Սիրելի' կանայք

Ամենից առաջ դուք ընտանիքի հոգատար ու սիրագորով մայրեր եք, պատվարժան տան-տիկիններ, ովքեր իրենց ընտանիքի ամրության, իրենց զավակների դաստիարակության երաշխավորն են:

Ցանկանում եմ առանձնակի շնորհավորել Հայոց բանակում իրենց պարտքը կատարող զինվորների մայրերին: Թող ձեր աչքերը միշտ փայլեն երջանկությունից, ապրեք անխռով և հպարտ՝ ձեր զավակների հաջողությունների և բարի լուրերի սպասմամբ:

Հարգարժան մայրեր ու կանայք, աղջիկներ և քույրեր

Հրաշալի տոնի՝ Մարտի 8-ի առթիվ ընդունեք իմ, համայնքի ղեկավարի աշխատակազմի և համայնքի ավագանու ամենաջերմ բարեմաղթանքներն ու շնորհավորանքները:

Մարտի 8-ով մեկնարկող Կանանց միամսյակն էլ թող դառնա ձեր նկատմամբ ուշադրության, մեծարանքի, ձեր խնդիրները բարձրաձայնելու, ձեր ներկայությունը կարևորելու լավագույն առիթ:

Թող ձեր կյանքի ամեն մի օրը հագեցած լինի անձնական և աշխատանքային հաջողություններով, բարձր տրամադրությամբ և դրական զգացողություններով:

Ցանկանում եմ ձեզ սեր և երջանկություն, խաղաղություն և բարեկեցիկ կյանք, երբեք չկորցնեք ձեր հոգու և մտքի լույսը: Միշտ մնացեք սիրված ու սիրելի՝ շրջապատված ջերմությամբ, հոգատարությամբ և հարազատ մարդկանցով: